# Որոշումների Ուղեցույց Նախադպրոցական Խնամքի և Կրթության Կենտրոններում և ՏԿ-12 Դպրոցներում Ախտանիշների և Վարակի Հետ Շփումների Վերաբերյալ

*Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն*
*Թարմացվել է՝ 8/15/2022*

# Որոշումների Ուղեցույց Ախտանիշներ Ունեցող *Երեխաների* Համար

# Որոշումների Ուղեցույց Ախտանիշներ Ունեցող Երեխաների Համար՝ Նախքան Կրթական Հաստատություն Մուտք Գործելը[1]՝ անկախ պատվաստման կարգավիճակից

[1]Եթե երեխան սկսում է իրեն վատ զգալ հաստատության ներսում, երեխային տեղափոխեք մեկուսացման տարածք (ֆիզիկապես հեռու ուղեկցող անձից, լավագույն դեպքում՝ բացօթյա վայր) և հետևեք ստորև նկարագրված որոշումների քայլերին:

Ստուգումը երեխայի մոտ հայտնաբերում է հնարավոր COVID-19-ին համապատասխան 1 կամ ավել ախտանիշներ:[1]

→ Երեխան ուղարկվում է տուն: Ծնողին/խնամակալին ուղղորդում են խորհրդակցել Բուժաշխատողի հետ՝ հետագա գնահատման և հնարավոր COVID-19-ի թեստավորման համար:

Ստուգումը երեխայի մոտ հայտնաբերում է հնարավոր COVID-19-ին ոչ համապատասխան ախտանիշներ:

→ Հաստատությունը որոշում է՝ արդյոք երեխան պետք է ազատ արձակվի դպրոցից՝ համաձայն հիվանդության վերահսկման սկզբունքների: Եթե երեխայի ախտանիշները դժվարացնում են հաստատության՝ COVID-19-ի անվտանգության արձանագրություններին հետևելը, երեխային պետք է ուղարկել տուն:

Բուժաշխատողը հաստատում է, որ երեխան չունի COVID-19-ին համապատասխան ախտանիշներ: → Երեխան մնում է տանը՝ համաձայն Բուժաշխատողի ցուցումների:

Բուժաշխատողը խորհրդատվություն չի անցկացրել կամ հաստատում է, որ երեխան ունի COVID-19-ին համապատասխան ախտանիշներ:

- Երեխան թեստավորվել է
  - Երեխայի COVID-19-ի ախտորոշիչ վիրուսային թեստը[2] **բացասական** է: → Երեխան մնում է տանը մինչև 24 ժամ շարունակ ջերմություն չունենա առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման և միչև ախտանիշները բարելավվեն:
  - Երեխայի COVID-19-ի ախտորոշիչ վիրուսային թեստը[2] **դրական է**: → Երեխան հետևում է Տնային Մեկուսացման Ուղեցույցին:
- Երեխան չի թեստավորվել → Երեխան հետևում է Տնային Մեկուսացման Ուղեցույցին:

[1]Երեխաների մոտ հնարավոր COVID-19-ի վարակին համապատասխան ախտանիշները ներառում են՝ ջերմություն ≥ 100.4°F; նոր առաջացած հազ (սկզբնական հազից տարբերվող), փսխում կամ ցանկացած նոր սկսվող փորլուծություն: Եթե երեխայի ախտանիշները համապատասխան չեն հնարավոր COVID-19-ին, սակայն կան մտահոգություններ, խորհուրդ է տրվում, որ երեխայի առողջական վիճակի գնահատումը կատարվի բուժաշխատողի կողմից:

[2]COVID-19-ի ախտորոշիչ վիրուսային թեստավորումը ներառում է Նուկլեինաթթվի Ուժեղացման Թեստը, օրինակ՝ ՊՇՌ-ի (PCR) կամ արագ հակագենի թեստը (ներառյալ ազատ վաճառվող կամ տանը կատարվող թեստերը): ՊՇՌ թեստերը համարվում են COVID-19-ի ամենաճշգրիտ թեստերը, սակայն թեստավորումը կարող է կատարվել և ՊՇՌ, և արագ հակագենի թեստի միջոցով:

# Որոշումների Ուղեցույց Ախտանիշներ Ունեցող *Աշխատակիցների* Համար

# Որոշումների Ուղեցույց Ախտանիշներ Ունեցող Աշխատակիցների Համար՝ Նախքան Կրթական Հաստատություն Մուտք գործելը[1]՝ անկախ պատվաստման կարգավիճակից

[1]Եթե աշխատակիցը սկսում է իրեն վատ զգալ հաստատության ներսում, տեղափոխեք նրան մեկուսացման տարածք (ֆիզիկապես հեռու ուղեկցող անձից, լավագույն դեպքում՝ բացօթյա վայր) և հետևեք ստորև նկարագրված որոշումների քայլերին:

Ստուգումը աշխատակցի մոտ հայտնաբերում է հնարավոր COVID-19-ին համապատասխան1 կամ ավել ախտանիշներ:[1]

→ Աշխատակիցն ուղարկվում է տուն: Նրան ուղղորդում են խորհրդակցել Բուժաշխատողի հետ՝ հետագա գնահատման և հնարավոր COVID-19-ի թեստավորման համար:

Ստուգումը աշխատակցի մոտ հայտնաբերում է հնարավոր COVID-19-ին ոչ համապատասխան ախտանիշներ:

→ Հաստատությունը որոշում է՝ արդյոք աշխատակիցը պետք է ազատ արձակվի՝ համաձայն հիվանդության վերահսկման սկզբունքների: Եթե աշխատակցի ախտանիշները դժվարացնում են հաստատության՝ COVID-19-ի անվտանգության արձանագրություններին հետևելը, նրան պետք է ուղարկել տուն:

Բուժաշխատողը հաստատում է, որ աշխատակիցը չունի COVID-19-ին համապատասխան ախտանիշներ:

→ Աշխատակիցը մնում է տանը՝ համաձայն Բուժաշխատողի ցուցումների:

Բուժաշխատողը խորհրդատվություն չի անցկացրել կամ հաստատում է, որ աշխատակիցն ունի COVID-19-ին համապատասխան ախտանիշներ:

Աշխատակիցը թեստավորվել է

- Աշխատակցի COVID-19-ի ախտորոշիչ վիրուսային թեստը[2] **բացասական** է: → Աշխատակիցը մնում է տանը մինչև 24 ժամ շարունակ ջերմություն չունենա առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման և մինչև ախտանիշները բարելավվեն:
- Աշխատակցի COVID-19-ի ախտորոշիչ վիրուսային թեստը[2] **դրական է**: → Աշխատակիցը հետևում է Տնային Մեկուսացման Ուղեցույցին:

Աշխատակիցը չի թեստավորվել → Աշխատակիցը հետևում է Տնային Մեկուսացման Ուղեցույցին:

[1]Մեծահասակների մոտ հնարավոր COVID-19-ի վարակին համապատասխան ախտանիշները ներառում են ջերմություն ≥ 100.4°F կամ տաքություն ունենալու զգացողություն (դող, քրտինք), հազ, շնչառական դժվարություն, համի կամ հոտի նոր առաջացած կորուստ, հոգնածություն, քթահոսություն կամ քթի փակվածություն, մկանային կամ մարմնի ցավ, կոկորդի ցավ, սրտխառնոց կամ փսխում, փորլուծություն: Եթե առկա չեն թվարկված ախտանիշները, սակայն կան մտահոգություններ, խորհուրդ է տրվում, որ կատարվի առողջական վիճակի լրացուցիչ գնահատում բուժաշխատողի կողմից:

[2]COVID-19-ի ախտորոշիչ վիրուսային թեստավորումը ներառում է Նուկլեինաթթվի Ուժեղացման Թեստը, օրինակ՝ ՊՇՌ-ի (PCR) կամ արագ հակագենի թեստը (ներառյալ ազատ վաճառվող կամ տանը կատարվող թեստերը): ՊՇՌ թեստերը համարվում են COVID-19-ի ամենաճշգրիտ թեստերը, սակայն թեստավորումը կարող է կատարվել և ՊՇՌ, և արագ հակագենի թեստերով:

**Որոշումների Ուղեցույց Հնարավոր Վարակված Անձանց Հետ**
***Սերտ Շփում Ունեցած Անձանց՝ Կոնտակտավորների (երեխա/աշակերտ կամ աշխատակից/անձնակազմի անդամ)*** **Համար**

# Որոշումների Ուղեցույց Կրթական Հաստատությունում Հնարավոր Վարակված Անձի Հետ Սերտ Շփում Ունեցած Անձանց՝ Կոնտակտավորների Համար

**Հնարավոր վարակված անձն** այն անձն է, որն ունի հնարավոր COVID-19-ին համապատասխան ≥ 1 ախտանիշներ[1]: ՏԿ-12 դպրոցներում և Նախադպրոցական Խնամքի և Կրթության (ECE) հաստատություններում **հնարավոր վարակված անձի** հետ սերտ շփում ունեցած անձինք՝ կոնտակտավորները, այն անձինք են, որոնք գտնվել են միևնույն փակ օդային տարածքով վայրում ԿԱՄ 24 ժամվա ընթացքում COVID-19-ով հիվանդ անձից գտնվել են մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավել, երբ նրանք վարակող են եղել: [2]

Հնարավոր վարակված աշխատակցի հետ սերտ շփում ունեցած անձանց՝ կոնտակտավորներին, ծանուցվում է, որ հնարավոր է՝ նրանք շփվել են վարակակրի հետ:

Կոնտակտավորները կարող են մնալ հաստատության ներսում քանի դեռ սպասում են, որ **հաստատվի վարակակրի հետ շփված լինելու փաստը**:[2]

Հաստատությունը հաստատում է, որ կոնտակտավորը շփվել է COVID-19-ի վարակակրի հետ:

Հաստատությունը հաստատում է, որ չպատվաստված կոնտակտավորը շփում չի ունեցել COVID-19-ի վարակակրի հետ, ԿԱՄ չի ներկայացվել այդպիսի շփումը հաստատող ապացույց: Հետագա գործողություններ չեն պահանջվում:

Ախտանիշներ չունեցող, սերտ շփում ունեցած անձանցից ՉԻ պահանջվում կարանտին պահպանել, սակայն պահանջվում է՝

(1) Հետևել առողջական վիճակին՝ ախտանիշների առաջացումը նկատելու համար, վարակի հետ վերջին շփումից հետո 10 օր:
(2) Եթե 2 տարեկան են կամ ավելի բարձր տարիքի, փակ տարածքներում այլ անձանց շրջապատում գտնվելիս կրել բարձր պաշտպանության դիմակ՝ բացառությամբ ուտելիս և խմելիս, վարակի հետ վերջին շփումից հետո 10 օր:*
(3) Թեստավորվել FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի վիրուսային թեստով (օրինակ՝ ՊՇՌ կամ հակագենի թեստ, ներառյալ տանը կատարվող թեստերը) վարակի հետ վերջին շփմանը հաջորդող 3-5 օրվա ընթացքում:**

*Դիմակ կրելու պահանջից ազատված 2 տարեկան և ավելի մեծ աշակերտները/երեխաները կարող են կրել կզակը ծածկող կտորով դեմքի վահան կամ պետք է թեստավորվեն առաջին անգամ 3-5-րդ օրերի, իսկ երկրորդ անգամ՝ 6-9-րդ օրերի ընթացքում՝ հաստատությունում մնալու համար: 2 տարեկանից փոքր երեխաները **չպետք է** դիմակ կրեն: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագիրը ՏԿ-12 Դպրոցներում Կամ Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագիրը ECE Հաստատություններում:

**Եթե դուք նախկինում՝ 90 օրվա ընթացքում, վարակվել եք COVID-19-ով, ապա ձեզնից չի պահանջվում թեստավորվել, եթե ձեզ մոտ ախտանիշներ չեն առաջացել:

Եթե դասասենյակներում կամ նման տարածությամբ վայրում սերտ շփում ունեցած անձանց համար կիրառվում է 24 ժամվա ընթացքում վարակված անձից մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա 15 րոպե կամ ավել ժամանակով գտնվելու սահմանումը, բոլոր մյուս անձինք, որոնք 24 ժամվա ընթացքում վարակված անձի հետ գտնվել են նույն փակ օդային տարածքով վայրում 15 րոպե կամ ավել ժամանակով, պետք է տեղեկացվեն, որ հնարավոր է՝ նրանք շփվել են վարակի հետ, և հորդորվում է, որ նրանք հետևեն վերևում նշված ուղեցույցին՝ ախտանիշներին հետևելու, դիմակ կրելու (2 տարեկան և ավելի բարձր տարիքի են) և թեստավորման համար:

[1] COVID-19-ի չափանիշներին համապատասխանող **ախտանիշները** տարբեր են երեխաների և մեծահասակների դեպքում, տես 3-րդ էջը (սլայդ) ՝ երեխաների չափանիշների և 5-րդ էջը՝ մեծահասակների չափանիշների համար:

[2] Կան ECE (Նախադպրոցական Խնամք և Կրթություն), ՏԿ-12 և IHE (Բարձրագույն Ուսումնական) հաստատություններում վարակի հետ սերտ շփում ունեցած անձանց հայտնաբերման տարբեր մոտեցումներ: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս հաստատությանը վերաբերող վարակի կառավարման ծրագիրը՝ ECE, ՏԿ-12, IHE

[3] **Վարակի հետ շփումը հաստատվում է** հնարավոր վարակված անձի հետ սերտ շփում ունեցած անձի դեպքում, եթե հաստատությունը ծանուցում է ստանում այն մասին, որ հնարավոր վարակված անձի COVID-19-ի ախտորոշիչ վիրուսային թեստի արդյունքը եղել է դրական ԿԱՄ անձը ախտորոշվել է COVID-19-ով բուժաշխատողի կողմից: